ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն, որը գտնվում է ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3 հասցեում ստորև ներկայացնում է իր կարիքների համար ՀՀ Տավուշի մարզի Կիրանցի Գ. Վարդանյանի անվան հիմնական դպրոցի տիպային (մոդուլային) շենքի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/9 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2021 թվականի հուլիսի 20-ին կնքված N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/9-3 գնման պայմանագրում 2021 թվականի սեպտեմբերի 17-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ N1	ՀՀ կառավարության 18.08.2021թ N1354-Ն որոշում:
Փոփոխության նկարագրություն	N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/9-3 պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցների հատկացում:
Փոփոխության հիմնավորում	Պայմանագրի 8.5 և 8.13 կետեր:

Պատվիրատու՝ *ՀՀ քաղաքաշինության կոմիտե*

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
20.07.2021թ. կնքված N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/9-3 գնման պայմանագրի

ք. Երևան «17» «09» 2021թ.

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և <<Ինտերեվրոս-Արգոս>> ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կապալառու), ի դեմս տնօրեն Գ. Ղազարյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, (երկուսը միասին՝ այսուհետ՝ Կողմեր) հիմք ընդունելով ՀՀ կառավարության 18.08.2021թ. N 1354-Ն որոշումը և ՀՀ Տավուշի մարզի Կիրանցի Գ. Վարդանյանի անվան հիմնական դպրոցի տիպային (մոդուլային) շենքի կառուցման աշխատանքների կատարման համար Կողմերի միջև 20.07.2021թ. կնքված ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/9-3 գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5 և 8.13 կետերը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը որոշեցին՝

1.1.1 Պայմանագրի 5.1 կետում ավելացնել 5.1.1 ենթակետ հետևյալ բովանդակությամբ

<<5.1.1 Պայմանագրի N1 հավելվածով նախատեսված աշխատանքների դիմաց 2021թ. համար վճարման ենթակա գումարը կազմում է 98 052 000 (ինսունութ միլիոն հիսուներկու հազար) ՀՀ դրամ, որից 16 342 000 (տասնվեց միլիոն երեք հարյուր քառասուներկու հազար) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:>>:

1.1.2 Հաստատել 2021թ. օրացուցային գրաֆիկը՝ համաձայն Համաձայնագրի N 1 հավելվածի:

1.1.3 Պայմանագիրը լրացնել նոր հավելված N 2-ով՝ համաձայն Համաձայնագրի N 2 հավելվածի:

2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը կազմված է 1 (մեկ) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

Համաձայնագրի N 1 և N 2 հավելվածները բաղկացած են մեկական էջերից և համարվում են Համաձայնագրի անբաժանելի մասը: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝	ԿԱՊԱԼԱՌՈՒ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե	<<Ինտերեվրոս-Արգոս>> ՍՊԸ
ք. Երևան, Հանրապետության հրապարակ	ք. Երևան, Ավան Թումանյան 3/10
կառավարական տուն 3	<<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ Կիևյան մ/ճ
ՀՀ ֆինանսների նախարարության	Հ/Հ 1150013831790100
աշխատակազմի գործառնական վարչություն	ՀՎՀՀ 02245698
Հ/Հ 900011023745	
ՀՎՀՀ 02565827	
Գլխավոր քարտուղար՝	Տնօրեն՝
_____ Ա. Մկրտչյան	_____ Գ. Ղազարյան
(ստորագրություն) Կ.Տ.	(ստորագրություն) Կ.Տ.

Հավելված N 1
20.07.2021թ. կնքված
N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/9-3 պայմանագրի
«17» «09» 2021թ. կնքված N 1 համաձայնագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ*

ՀՀ Տավուշի մարզի Կիրանցի Գ. Վարդանյանի անվան հիմնական դպրոցի տիպային (մոդուլային) շենքի կառուցման 2021թ. վճարման (ֆինանսական պարտավորությունների կատարման) ժամանակացույցով նախատեսված ֆինանսական միջոցների շրջանակներում կատարվելիք աշխատանքների

N	Գումարը	Կատարվելիք աշխատանքների ներկայացման վերջնաժամկետը*
1	98 052 000	Ոչ ուշ քան 90-րդ օրացուցային օրը

* Օրացուցային գրաֆիկով նախատեսված աշխատանքների սկիզբ է համարվում Պայմանագիր 1.3 կետում նշված ժամկետը:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011023745
ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար՝

_____ Գ. Մելոյան
(ստորագրություն) L.S.

ԿԱՊԱԼԱՌՈՒ՝
<<Ինտերեվրոս-Արգոս>> ՍՊԸ
ք. Երևան, Ավան Թումանյան 3/10
<<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ Կիևյան մ/ճ
Հ/Հ 1150013831790100
ՀՎՀՀ 02245698

Տնօրեն՝

_____ Գ. Ղազարյան
(ստորագրություն) L.S.

Հավելված N 2
20.07.2021թ. կնքված
N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/9-3 գնման պայմանագրի
« 17 » « 09 » 2021 թ. կնքված N 1 համաձայնագրի

<<Հավելված N 2
20.07.2021թ. կնքված
N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/9-3 գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի														
չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45211231/17	ՀՀ Տավուշի մարզի Կիրանցի Գ. Վարդանյանի անվան հիմնական դպրոցի տիպային (մոդուլային) շենքի կառուցման աշխատանքներ	-	-	-	-	-	-	-	-	24 513 000	98 052 000	98 052 000	98 052 000	**98 052 000**
ԸՆԴԱՄԵՆԸ՝			-	-	-	-	-	-	-	-	24 513 000	98 052 000	98 052 000	98 052 000	**98 052 000**

**Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:>>:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011023745
ՀՎՀՀ 02565827
Գլխավոր քարտուղար
_____ Ա. Մկրտչյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ՝
<<Ինտերեվրոս-Արգոս>> ՍՊԸ
ք. Երևան, Ավան Թումանյան 3/10
<<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ Կիևյան մ/ճ
Հ/Հ 1150013831790100
ՀՎՀՀ 02245698
Տնօրեն՝
_____ Գ. Ղազարյան
(ստորագրություն)
Կ.Տ.

«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ
«ԿԻԵՎՅԱՆ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂ
ЗАО «АРМБИЗНЕСБАНК»
ФИЛИАЛ "КИЕВЯН"
"ARMBUSINESSBANK" CJSC
"KIEVYAN" BRANCH

N 3293-13

«14» 09 2021

ԵՐԱՇԽԻՔ
(որակավորման ապահովում)

1.Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է ՀՀ քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ բենեֆիցիար) կողմից «ՀՀԲԿ-ԲՄԱՇՁԲ-20/9» ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի արդյունքում «ԻՆՏԵՐԵԿՐՈՍ-ԱՐԳՈՍ» ՍՊԸ (այսուհետ՝ պրինցիպալ) կողմից կնքվելիք N «ՀՀԲԿ-ԲՄԱՇՁԲ-20/9» պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) նախատեսված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ որակավորման ապահովում (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ):

2. Երաշխիքով «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել **29,415,600 (Քսանինը միլիոն չորս հարյուր տասնհինգ հազար վեց հարյուր)** ՀՀ դրամ (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց տասը աշխատանքային օրվա ընթացքում:

Որակավորման ապահովման գումարը նվազեցվում է, եթե առկա են ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 26-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Երաշխիքի գումարը վճարելուց հաշվի է առնվում պայմանագրի կատարման շրջանակում բենեֆիցիարի և պրինցիպալի միջև երկկողմ հաստատված և պրինցիպալի կողմից երաշխիքը տված անձին ներկայացված հանձնման-ընդունման արձանագրության (արձանագրությունների) հիման վրա երաշխիքի գումարից կատարված նվազեցումները:

Վճարումը կատարվում է բենեֆիցիարի 900008000664 հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է բենեֆիցիարի և պրինցիպալի միջև N «ՀՀԲԿ-ԲՄԱՇՁԲ-20/9» ծածկագրով կնքվելիք պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև **12.01.2023թ. (տասներկուսը հունվարի երկու հազար քսաներեք թվական):** Սույն երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը երաշխիք տվող անձը երաշխիքը տրամադրելու օրը իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է նաև սույն երաշխիքի 1-ին կետում նշված ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստի հասցեին:

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) N «ՀՀԲԿ-ԲՄԱՇՁԲ-20/9» ծածկագրով կնքված պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները.

2) բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը.

3) պայմանագրի շրջանակում բենեֆիցիարի և պրինցիպալի միջև երկկողմ հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը (արձանագրությունները) կամ դրա (դրանց) պատճենները:

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

«ԿԻԵՎՅԱՆ» մասնաճյուղի տնօրեն՝ _____ Մ.Նահապետյան

ՀՀԲԿ ղեկավար՝ _____ Մ.Գրիգորյան

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Կիևյան 11Ա/64; Հեռախոս՝ (+37460) 37 25 13; Էլ.փոստ՝ kievyan@armbusinessbank.am; Կայք՝ www.armbusinessbank.am
Адрес: Киевян 11А/64, г. Ереван, РА; Телефон: (+37460) 37 25 13; Эл.почта: kievyan@armbusinessbank.am; Веб-сайт: www.armbusinessbank.am
Address: 11A/64 Kievyan, Yerevan, Armenia; Telephone: (+37460) 37 25 13; E-mail: kievyan@armbusinessbank.am; Web-site: www.armbusinessbank.am

«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ
«ԿԻԵՎՅԱՆ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂ
ЗАО «АРМБИЗНЕСБАНК»
ФИЛИАЛ "КИЕВЯН"
"ARMBUSINESSBANK" CJSC
"KIEVYAN" BRANCH

N 3294-13

«14» 09 2021

ԵՐԱՇԽԻՔ
(պայմանագրի ապահովում)

1.Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է ՀՀ քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ բենեֆիցիար) և «ԻՆՏԵՐԵՎՐՈՍ-ԱՐԳՈՍ» ՍՊԸ միջև կնքվելիք N «ՀՀԲԿ-ԲՄԱՇՁԲ-20/9» պայմանագրից բխող պրինցիպալի պարտավորությունների (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ) կատարման ապահովում:

2. Երաշխիքով «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել **9,805,200 (Ինը միլիոն ութ հարյուր հինգ հազար երկու հարյուր)** ՀՀ դրամ (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց տասը աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի 900008000664 հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է բենեֆիցիարի և պրիցիպալի միջև կնքվելիք N «ՀՀԲԿ-ԲՄԱՇՁԲ-20/9» պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 12.01.2024թ. (տասներկուսը հունվարի երկու հազար քսանչորս թվական): Սույն երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը երաշխիք տվող անձը երաշխիքը տրամադրելու օրը իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է նաև սույն երաշխիքի 1-ին կետում նշված պայմանագրի կնքման նպատակով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստի հասցեին:

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) N «ՀՀԲԿ-ԲՄԱՇՁԲ-20/9» պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները.

2) բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը:

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

«ԿԻԵՎՅԱՆ» մասնաճյուղի ղեկավարի՝ _____ Մ.Նահապետյան

Հաշվապահ՝ _____ Մ.Գրիգորյան

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Կիևյան 11Ա/64; Հեռախոս՝ (+37460) 37 25 13; Էլ.փոստ՝ kievyan@armbusinessbank.am; Կայք՝ www.armbusinessbank.am
Адрес: Киевян 11А/64, г. Ереван, РА; Телефон: (+37460) 37 25 13; Эл.почта: kievyan@armbusinessbank.am; Веб-сайт: www.armbusinessbank.am
Address: 11A/64 Kievyan, Yerevan, Armenia; Telephone: (+37460) 37 25 13; E-mail: kievyan@armbusinessbank.am; Web-site: www.armbusinessbank.am